Նախագիծ
15.05.2009

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ « Կողմեր»),

նպատակ ունենալով ամրապնդել առկա բարեկամական կապերը իրենց ժողովուրդների միջև,

հաշվի առնելով իրենց երկրներում հասարակական և տնտեսական զարգացման ամրապնդման և բարելավման հարցում փոխադարձ հետաքրքրվածությունը,

համոզված լինելով կայուն զարգացման անհրաժեշտության մեջ,

ընդունելով տեխնիկական համագործակցության փոխադարձ առավելությունները (շահերը) երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, և

ցանկանալով զարգացնել համագործակցությունը, որը կխթանի տեխնիկական առաջընթացը,

համաձայնվեցին հետևյալի մասին.

Հոդված I

Սույն Տեխնիկական Համագործակցության Համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», ուղղված է առաջնահերթ ոլորտներում Կողմերի միջև տեխնիկական համագործակցության խթանմանը:

Հոդված II

Սույն Համաձայնագրի նպատակների իրականացման համար Կողմերը կարող են օգտվել եռակողմ համագործակցության մեխանիզմներից՝ համագործակցելով այլ երկրների, միջազգային կազմակերպությունների և տարածաշրջանային գործակալությունների հետ:

Հոդված III

1. Տեխնիկական համագործակցության ծրագրերը իրականացվում են Լրացուցիչ Համաձայնագրերի միջոցով:

2. Վերոնշյալ ծրագրերի իրականացման և համակարգման համար անհրաժեշտ մարմինները և այլ բաղկացուցիչները, նույնպես ստեղծվում են Լրացուցիչ Համաձայնագրերով:

3. Հասարակական և մասնավոր հատվածի կառույցները, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունները կարող են մասնակցել ինչպես սույն Համաձայնագրով, այնպես էլ Լրացուցիչ Համաձայնագրերով նախատեսված ծրագրերում:

4. Հաստատված ծրագրերը կարող են ֆինանսավորվել Կողմերից մեկի կողմից կամ համատեղ, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից, հոգաբարձուների հիմնադրամներից, տարածաշրջանային և միջազգային ծրագրերից և այլ դոնորներից:

Հոդված IV

1. Տեխնիկական համագործակցության ծրագրերին առնչվող խնդիրների քննարկման նպատակով Կողմերի ներկայացուցիչների միջև նշանակվում են հանդիպումներ: Նման խնդիրներից են.

ա/ տեխնիկական համագործակցության իրականացման համար ընդհանուր առաջնահերթության ոլորտների որոնումն ու հաստատումը,

բ/ երկու Կողմերի համար ընդունելի մեխանիզմների և ընթացակարգերի հաստատումը,

գ/ Աշխատանքային Ծրագրերի գնահատումն և հաստատումը,

դ/ տեխնիկական համագործակցության ծրագրերի, նախագծերի և գործունեության իրականացման վերլուծությունը, հաստատումն ու վերահսկողությունը,

ե/ սույն Համաձայնագրով նախատեսված ծրագրերի, նախագծերի և գործունեության արդյունքների գնահատումը:

2. Հանդիպումների անցկացման վայրը և ժամկետը համաձայնեցվում է դիվանագիտական ուղիներով:

Հոդված V

Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է, որ սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերը, տեղեկատվությունը և այլ մանրամասները ոչ մի դեպքում չպետք է հրապարակվեն կամ փոխանցվեն երրորդ կողմին առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության:

Հոդված VI

Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է ապահովել մյուս Կողմից սույն Համաձայնագրի ներքո ուղարկված անձնակազմին անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցությամբ, կապված նրանց բնակության, տեղափոխման միջոցների, տեղեկատվության մատչելիության հետ՝ Լրացուցիչ Համաձայնագրերով ամրագրված իրենց հատուկ պարտականությունների իրականացման նպատակով:

Հոդված VII

1. Յուրաքանչյուր Կողմ ֆինանսապես աջակցում է իր տարածքում իրենց պարտականությունները կատարող մյուս Կողմից նշանակված անձնակազմին ինչպես նաև օրենքով սահմանված նրանց խնամառուներին՝ փոխադարձության սկզբունքով, այն պայմանով, որ Բրազիլիայի տարածքում՝ նրանք բրազիլիացիներ կամ Բրազիլիայում մշտական բնակություն ունեցող օտարերկրացիներ չեն, հետևյալ դեպքորում.

ա/ համաձայն յուրաքանչյուր Կողմերի գործող կանոնների, վիզաները պահանջվում են դիվանագիտական ուղիներով,

բ/ կեցության առաջին վեց ամիսների ընթացքում ներմուծման տուրքերից և անձին պատկանող ապրանքների վրա դրված այլ պարտավորություններից ազատումը, բացառությամբ այն տուրքերի, որոնք վերաբերում են պահեստավորման, տեղափոխման և այլ նմանատիպ ծառայություններին, որոնք նախատեսված են նախապես համաձայնեցված այն դեպքերին, երբ հյուրընկալող երկրում օրինական մնալու ժամանակահատվածը գերազանցում է մեկ տարին և նման անձնական պատկանելիության ապրանքները ծրագրի վերջում վերաարտահանվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ներմուծման տուրքերը արդեն մուծվել են,

գ/ սույն Հոդվածի "բ" կետում նշված բացառություններն /ազատումը/ և սահմանափակումները, գործում են նաև վերոնշյալ ապրանքների վերաարտահանման ժամանակ,

դ/ աշխատավարձերից գանձվող շահութահարկից ազատումը իրականացվում է ուղարկող Կողմի համապատասխան մարմնի կողմից. աշխատավարձի կամ օրավարձի դեպքում դրանք վճարվում են հյուրընկալող Կողմի համապատասխան մարմնի կողմից այդ երկրի օրենսդրությանը և Կողմերի միջև ստորագրվելիք կրկնակի հարկման բացառման մասին համաձայնագրի դրույթներին համաձայն,

ե/ անձեռնամխելիություն սույն Համաձայնագրով նախատեսված, ի պաշտոնե կատարված բոլոր գործողություններին առնչվող դատական հետապնդման նկատմամբ,

զ/ ճգնաժամային իրավիճակի դեպքում հայրենիք վերադառնալու միջոցների ապահովում:

2. Անձնակազմի ընտրությունը կատարում է ուղարկող Կողմը, իսկ հաստատումը՝ ընդունող Կողմը:

Հոդված VIII

Սույն Համաձայնագրի դրույթներին համաձայն՝ մյուս Կողմի տարածք ուղարկված անձնակազմը գործում է յուրաքանչյուր նախագծի ժամանակացույցին և պայմաններին համաձայն և ենթարկվում է հյուրընկալող երկրի օրենքներին և կարգավորումներին, բացառությամբ սույն Համաձայնագրի 7-րդ Հոդվածի դրույթների:

Հոդված IX

1. Սույն Համաձայնագրի ներքո մշակված ծրագրերի իրականացման համար նախատեսված ապրանքները, սարքավորումները և այլ պարագաները, որոնք տրամադրվել մի Կողմից մյուսին, ինչպես նախատեսված և հաստատված է համապատասխան Լրացուցիչ Համաձայնագրում, ազատվում են ներմուծման և արտահանման համար նախատեսված գանձումներից, պարտավորություններից և այլ ծախսերից, բացառությամբ այն ծախսերի, որոնք կապված են պահպանման, տեղափոխման և նմանատիպ ծառայությունների ծախսերին:

2. Ծրագրերի ավարտին բոլոր վերոնշյալ ապրանքները, սարքավորումները և այլ պարագաները (բաղկացուցիչները), որոնք մշտապես չեն փոխանցվել ստացող Կողմին ուղարկող Կողմից, նույնպես վերաարտահանվում են՝ ազատված լինելով ներմուծման և արտահանման մաքսատուրքերից, բացառությամբ այն տուրքերի և մուծումների, որոնք վերաբերում են պահեստավորման, տեղափոխմանան և այլ նմանատիպ ծառայությունների ծախսերին:

3. Այն դեպքում, երբ ներկրվող և արտահանվող ապրանքները նախատեսված են սույն Համաձայնագրի ներքո ձևավորված ծրագրերի իրականացման համար, պետական կառույցը նախաձեռնում է հնարավոր միջոցները՝ այդ ապրանքները մաքսազերծելու համար:

Հոդված X

1. Յուրաքանչյուր Կողմ դիվանագիտական ուղիներով տեղեկացնում է մյուս Կողմին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին: Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկրորդ ծանուցագրի ստացման օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը գործում է հինգ (5) տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարացվում է հաջորդ հնգամյա ժամանակահատվածով, եթե Կողմերից որևիցե մեկը, դիվանագիտական ուղիներով չի տեղեկացնում մյուս Կողմին Համաձայնագրից դուրս գալու իր որոշման մասին, հերթական ինքնաբերաբար երկարացումից առնվազն վեց (6) ամիս առաջ:

3. Եթե սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է, ներառելով եռակողմ համագործակցությունը երրորդ երկրների հետ, Կողմերը որոշում են արդյոք կատարման ներքո գտնվող գործողությունները պետք է շարունակվեն, թե ոչ:

4. Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ՝ համաձայն սույն Հոդվածի առաջին պարբերության դրույթների:

Հոդված XI

Վեճերը, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում, պետք է լուծվեն միջազգային օրենսդրությանը համապատասխան խաղաղ և բարեկամական միջոցներով՝ նախապատվություն տալով Կողմերի միջև ուղիղ խորհրդատվություններին:

Հոդված XII

Կատարված է ք. .....-ում, ... 200 թ.-ին երկու (2) բնօրինակով, հայերեն, պորտուգալերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների առաջացման դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տարբերակին:

Հայաստանի Հանրապետություն Կառավարության կողմից		**Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Կառավարության կողմից**